

5288

huytphie
hGumpuy

1846

2004

ՅԱՅՏԱՐԵՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԴԴԵՄ ՆՈՐԱՂԱՆԴԻՑ

1846

Printed in Turkey

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՅՈՂԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

—1846—

40 Ժողով :

281.6

Հ-29

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

34453, 43100, 33, 4322



1840

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

34453, 43100, 33, 4322

L-28

1105-ԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2816

ԵՐԿՐՈՐԴ

Z-29

ԸՆԴԴԷՄ ՆՈՐԱՂԱՆԳԻՑ

Printed in Turkey

ՏՊԵՍԷՆ

ՀՐԱՄԱՆԱԻ Տ. ՄԱՏԹԵՈՍԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱԶԳԱՍԵՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԻԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻ ՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1846 =

Printed in USSR

5288-42



1225-87

ՅԵՅՏԵՐԸՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ

Նորազանգներուն 1846 Յունիար 21 հանած շքա-
բերական թղթոյն գէմ:

Քրիստոսնեայ եմք ըսելով զիրենք
ուղղափառայ կարգը գնող ինքնահա-
լած անձինք՝ առ անձին գրով իրենց դա-
ւանու թիւնը Սրբազան Պատրիարքին
և աղգապետ մեծասպատիւ Ամիրայից
յայտնելով՝ Նիկիական հանգանակին
մէջէն բաներ վերցունելու և նոր յա-
ւելուածներ գրնելու համար ձակելէն
ետքը՝ այս անգամ մէկ բողոքոյ գիր մը
հրատարակեցին . որ է այս :

Վսեմափայլ Աստուածատէր Ամիրայ :

Չեր վսեմութեանդ մեր խղճալի վիճակը յայտ-
նեցինք յուսալով՝ որ շնորհք պիտի գտնանք ձեր
յարգութեանը առջեւ մեր դատաստանը իրաւամբ
տեսնալու . բայց մինչեւ հիմա մեր ակնկալութեանը
չի հասնելով, և տեսնալով որ օրքան զօր մեր վրայ ե-
ղած անիրաւ բռնութիւնը կը սաստկանայ . անուն
նիս՝ պատիւնիս՝ անձերնիս՝ տաջուածքնիս՝ զաւկը
ներնիս՝ և ընտանիքնիս վտանգի մէջ կը տեսնամք

և յանցանքնիս ալ մէկ քանի շահախնդիր մարդոց
 մտքին մէջէն 'ի զսա վճառւած չէ, ո՛չ կրօնական և
 ո՛չ քաղաքական ատեանով: Աւստի կրկին կը պարտա-
 ւորիմք ձեր բարեպաշտութեանը բողոքել և պարզա-
 պէս կը ծանուցանեմք ձեզի որ մենք տասնեւհիններ-
 բորդ Դարուն մէջ կը դատապարտվիմք ո՛չ մէկ յան-
 ցանքով մը՝ այլ միայն տեառն մերոյ Յնի Քնի ցրցու-
 ցած անսկար ճամբուն մէջ քալելուս համար. նորէն
 կ'ըսեմք, ո՛չ քաղաքական և ո՛չ կրօնական ատեանը
 վճառւած է մեր դատապարտութիւնը: Մենք աղէկ
 գիտեմք որ մեր սիրելի Ազգին մէջ թէ յարգի ազգա-
 պետաց և թէ հասարակութեան մէջ անհամար ան-
 ձինք կան որ սաստիկ կը ցաւին այս անիրաւ բանու-
 թեանը վրայ և կը զզուին այս սոսկալի անգթութեա-
 նը վրայ: Մենք բնաւ մեր սիրելի Ազգէն գանգատ
 մը չունիմք: Մենք գիտեմք՝ որ սա բաներուն հեղի-
 նակը մէկ քանի օտար հողմերէ շարժուած խռովա-
 սէր անխիղճ մարդիկ են, որ սրբազան Պատրիարքին
 միտքը իրենց գրաւեր են այս բաներս ընել տալու և
 բարեմիտ հասարակութիւնը կը զրգռեն մեր վրայ
 ազմուկ յարուցանելու. անանկ մարդիկ՝ որ քանի մը
 տարի առաջ ալ միամիտ հասարակութիւնը զրգռե-
 ցին յարգի Ազգապետներուն դէմ գանգատ ընելու
 Բարձրագոյն գրանը, և Ազգին բարի անունը կոտոր-
 ւելու փտանդին մէջ գրին օտար ազգաց առջեւ:
 Մենք սա ալ գիտնալով աղէկ կը ծանուցանեմք ձեր
 արժանապատուութեանը՝ որ այս փոթորիկը արեւե-
 լեան քաղցրասիւք հողմէն շնչուած չէ. Հայոց ազ-
 գը ինքիսմէն ստիպուած չէ իր խաղաղասէր համ-
 բաւը փտանդի մէջ դնել այս բաները ընելով. այլ
 արեւմտեան գառնաշունչ հողմէն կը շարժի կոր, որ
 ներկայ դարու մէջ անգամ մըն ալ փշելով Ազգը եր-
 կուքի պառակտեց: Մեր աղաչանքը ձեր աստուա-
 ծասիրութեանը այս է, որ ձեր խաղաղասէր բնա-
 ւորութեամբը և Աստուածային բնաւորութեամբը
 թող շտաբ որ ձեր խնորհ Ազգայինքը մէկ քանի

մարդոց անխաչեմ՝ ամբարտաւանութեանը և ծուռ
 դատողութեանը զո՛հ բլան . և աղէկ ճանչնաք ու
 որոշէք Ազգին բարեկամները ու թշնամիները :

Մնամք ձերդ մարդասիրութեան կարօտեալ աղօ-
 թող ծառայք՝

Հպաճեալ քրիստոնեայքս :

Պոլիս . 1846 Յունվար 31

Այս գրովս՝ ինչպէս որ կը հասկըց-
 լի իրենց համար դատաստան և ար-
 դարութիւն պահանջելով՝ իմացընել
 կ'ուզեն որ մինչեւ հիմա իրենց դէմ
 եղածը անիրաւութիւն է :

Իրենց դէմ բան եղած չըլլալը աս-
 կէց առաջ ելած յայտարարութեանը
 մէջ իմացուցինք . և որովհետեւ անի-
 կայ անոնց ձեռքը չի հասած անոնք ա-
 ճապարեր այս բողոքս ըրեր են . ուստի
 իրենց ըսածին մէկ մասին պատասխանը
 մեր առաջին յայտարարութեանը մէջ
 կը գտնեն . ուրիշ պէտք եղածները այս
 տեղս կը գնեմք . բայց առաջկուց այս
 ծանուցանեմք , որ քանի մը անձնական
 և մասնաւոր բաներ գրած են իրենց
 բողոքոյն մէջ . որպէս թէ սրբազան
 Պատրիարքը քանի մը խռովասէր և ան-
 խիղճ անձինքներէ գրգռելով իրենք կը
 հալածէ եղեր . այս մարդիկներս օտար

հովերէ շարժըլած են եղեր, առաջկուց
ալ ազգին մէջ խռովութիւն հաներ են
և այլն :

Ասանկ ամբաստանութեանց վրայ
բան խօսելու չեմք պարտաւորիր . քան
զի մեր միտքը սրբազան Պատրիարքին
ասոնց վրայօք բռնած եղանակը և կեր-
պը ինչ ըլլալը հասկըցընել է . այս և
այն մարդիկ խռովասէր են կամ խաղա-
ղասէր , անիկայ քննելը մեր նպատակէն
դուրս է . և ուզէինք ալ նէ չէինք կըր-
նար այն մասնաւորաց վրայ բան խօ-
սիլ . որովհետեւ անոնց սլ ըլլալին
չեմք գիտեր : Աշան մը ցըցուցեր են ,
թէ սրբազան Պատրիարքը գրգըռող
մարդիկն են ասոնք . բայց այս նշանով
անհնարին է մարդ գուշակել . որովհե-
տեւ սրբազան Պատրիարքը այս բանս
ընելու գրգըռող չի կայ . ինքը իրեն
պարտականութիր կը կատարէ կոր ժու-
ղովուրդը պահպանելով օտարաձայն
պէսպէս վարդապետութիւններէն . գանք
ուրիշ խօսքերնուն :

Ա՛րսեն . “ ()ը քան զօր մեր վրայ ե-
” ղած անիրաւ բռնութիւնը կը սաստ-
” կանայ ” : Ա՛ր սխառասխանեմ . այդ օր
քան զօր սաստկանալը մենք չեմք գի-

տեր . քանզի սկիզբէն սրբազան Պատ-
 ըիարքը ինչ եղանակ բռնած էր հաւա-
 տացեալ ժողովուրդը օտար վարդապե-
 տու թե՛նէն զգուշացընելու նէ՝ նոյնը
 պահեց անփոփոխ . և մինչեւ հիմա
 նոյնն է . ո՛չ եվելցուց և ո՛չ պակսե-
 ցուց : Այս եղանակիս անուներ բռ-
 նու թիւն դնողներուն հարկ է ասանկ
 խօսքերով բողոք ընելէն առաջ՝ բռ-
 նու թի բառին նշանակու թիր սորիւլ :
 Բռնու թիւն կ'ըսվի այն դործոյն՝
 որ մէկ մարդու մը ազատու թեան դէմ
 է : « Սեր վրայ բռնու թիւնը կը սաստ-
 ՚ կանայ » ըսող մարդոցը ազատու թեր
 ո՛չ դպչող կայ և ո՛չ դպչելու միտք ու-
 նեցող կայ . ինչպէս որ մէկ մարդ մը
 սուտ խօսի , և ես այն մարդուն համար
 ուրիշ մարդոց իմացընեմ որ այն ինչ
 մարդ ստախօս է , անոր խօսքին չի հա-
 ւատան , ստախօսին վրայ բռնու թիւն
 ըրած չեմ ըլլար՝ անիկայ միշտ ազատ է
 ուղածին չափ սուտ խօսելու . բայց ինքն
 ալ ուրիշին կամացը վրայ բռնու թիւն
 չի կրնար բանեցընել . ուրիշներն ալ
 ազատ են անոր ըսածը իրաւի տեղ ըն-
 դունելու , կամ իբրեւ սուտ՝ հերքե-
 լու : Այլ երբ որ այն մարդուն ստախօս

րը ալը օրէ օր համբաւելով՝ իրեն խօս-
 քը ճշմարիտ սեպոյղներուն համբանքը
 օրէ օր պակսին, իրեն խօսքը մտիկ ք-
 նողները օրէ օր անկէ երես դարձընեն
 նէ, իրաւունք չունենար այն ստախօ-
 սը բողոքելու, թէ « օր քան զօր մեր
 » վրայ եղած բռնութիւնը կը սաստկա-
 » նայ » : Արքազան Պատրիարքին բրածն
 ալ՝ որ ասոնք բռնութիւն կը կարծեն,
 ասոր պէս է. հասարակութեան կը ծա-
 նուցանէ որ այս նորազանդները որ նր
 գիրքէն զատ մեզի հաւատոյ կանոն
 չեմք ճանչնար կ'ըսեն, սուտ վարդա-
 պետութիւններ ունին, դաւանութիւն
 Քրիստոսական ընդհանուր եկեղեցւոյ
 ունեցած հաւատքին դէմ է. և պար-
 զամիանները և տգէտները ասոնց վար-
 դապետութեանը ականջ դնելով կը
 խաբւին, կը մոլորին և հոգինին կոր-
 սրվելու վտանգի մէջ կ'իյնայ. հաւա-
 տացեալ ժողովուրդը ասիկայ լսելով՝
 իրեն ազատ կամօքը ասոնց հետ տե-
 սութիւն չընեն, առուտուր չընեն,
 մէկ տեղ չի բնակիր, և այս ալ արքազան
 Յովհաննէս աւետարանչին պատուի-
 րանին կատարումն է, որ կ'ըսէ, թէ որ
 մէկը ձեզի գայ ու այս վարդապետու-

Թիւնս չնդուենի, անիկայ տուն մի առնէք. և անոր բարեւ անդամ մի տաք. և ո՛վ որ անոր բարեւ տալու ըլլայ նե՛՛ անոր չարութեան գործքերուն հաղորդ կ'ըլլայ (Բ. Յ՞՛Է. ան. 10) : Իսկ բողոք ընտղներուն աղատութիւնը ասով ամենեւին չի մնասովիւր. ուղած տեղերնին կրնան երթալ. իրենց հաւնած հաւատքնին կրնան բռնել. իրարմէ զատող չի կայ. իրարու հետ կրնան տեսութիւ և ընտանութիւն ընել. և այլն :

Արևսն որ, « Յանցանքնիս ալ մէկ » քանի շահանդիր մարդոց մտքին մէկն ջնն ՚ի զատ վճռուած չէ՛, ո՛չ կրօնական և ո՛չ քաղաքական ատեանով : Ասոր պատասխան տալու տեղը մենք ալ կը հարցընեմք. ասոնց յանցաւոր ըլլալէն որի ինչ շահ կ'ըլլայ, և անմեղուինին որի մնաս կը բերէ. արդեօք կրնայ ըլլալ որ մէկը յանցաւոր ըլլայ նե՛՛ մէկ ուրիշի մը շահ ծագի. կամ մէկը անմեղ ըլլայ նե՛՛ ուրիշ մը անոր անմեղութեամբը մնասովիւ : Այն անանկ դիպուածներ. բայց կարծեմ թէ այս խօսքս գրողներուն դիտաւորութիւնը անոնց վրայ չէ՛. զորօրինակ. մէկ մարդ մը շատ ըստակ վաստրկելու պաշտօնի մը վրայ

կը գտնուի . ուրիշ մը նայն սրաշտօնին աչք ունենալով անոր վրայ յանցանք մը կը ձգէ , զըստարտութիւն մը կ'ընէ , որ այն սրաշտօնէն այն մարդը ձըգվի , և ինքը անոր տեղը անցնի : Մողորդները իրենք ալ դիտեն որ ասանկ շահաւոր բան մը չի կայ իրենց ձեռքը՝ որ ուրիշները անոր աչք զարնելու համար իրենց վրայ յանցանք ձըգեն : Այս որ չըլլայ նէ՝ չգիտեմք ինչ շահախնդիր մարդու միտք կրնայ մտնել ասոր մէջ : Մանրվողներուն ունեցածը աւնել և անոր համար ամբաստանութիւն ընողին տալ չկայ . որ ասոնց վրայ յանցանք դնողը այս երեսէն մէկ շահ մը գտնելու ալ կրնկալութիւն ունենայ : Թէ որ այն բողոքման դիրք գրողը այդ խօսքը մը տածմամբ գրած է նէ՝ կ'ուզէինք իմանալ թէ ինչ շահ է ըսածը :

Ինչ և իցէ կ'ըսեն որ՝ յանցանքնիս ասոնց մտքին մէջէն ՚ի զատ վճռուած չէ : Ալ ասով կրօնական և քաղաքական ատեան կ'ուզեն : Հիմա աշխարհքի մէջ տեսանելի եկեղեցին կը սխալի ըսելը իրենց մտքորութեանը հիմն բռնող՝ և Քրիստոսական ընդհանուր եկեղեցւոյ դաւանութենէն զատիլը ի-

բենց բնաւ խիզճ չընող մարդիկը կրօնական ասեան կ'ուզեն նէ մարերնին ի՞նչ է : կրօնական ասեան ըսելն ու եկեղեցական ժողովչ ըսելը արդեօք մէկ նշանակութիւն ունին ասոնց մտքին մէջը , թէ այլ և այլ նշանակութիւն ունին : թէ որ այս երկուքս այլ և այլ նշանակութիւն ունին նէ՝ կրօնական ասեան ըսածնին նոր բան պիտի ըլլայ . և եկեղեցին նոր բան չընդունիր : թէ որ եկեղեցական ժողովչ ըսել է նէ՝ ասոնց ազանգը նոր հնարված աղանդ մը չէ՝ որ նոր ժողովք և նոր քննութիւն ըլլալու կարօտ ըլլալի : Մենք թէ հիմա մէկը ելլէ և Արիստի մտար վարդապետութիւնը քարոզէ , այն մարդուն համար նորէն ժողովք ընել պէտք է մի : Մաւական չըլլար մի անոր վարդապետութեան մտարութիւնը դասելու համար Աիկիոյ ժողովոյն դատատանը , որ թէպէտ ասկէց 1520 տարի առաջ եղած է , բայց ճիշդ այն մարդուն դէմ է . քանզի քննելիքը և դատապարտելիքը այս կամ այն մարդը չէ՝ , և նոր ըրած վարդապետութիւնն է :

Աստի հիմա մենք ալ ասոնց համար եղած կրօնական ասեանները կամ եկեղեցա-

կան ժողովքները նշանակեմք, որ ա-
սոնք հոն դատված ու դատապարտը-
ված են :

Քնի Աստուծոյ տեառն մերոյ ծնող
սուրբ կոյս Սարխամին Աստուածածին
չըսելուն համար Նեատոր հերեօի-
կոսին հետ դատված և դատապարտը-
ված են Ափեսոսի ժողովքին մէջ՝ Քը-
րիստոսի 431 թուին, և ժողովոյն խօս-
քնն է այս. « Աթէ որ ոչ խոստովա-
» նեացի եթէ Աստուած է ըստ ճշմար-
» տութեան Ամմանուէլ, և վասն այ-
» նորիկ Աստուածածին զսուրբ կոյսն
» ծնեալ ըստ մարմնոյ զմարմնացել Ռա-
» նրն ան, նղովեալ եղիցի » (Ափ-րդէ
դարասմանց . Թղ . 477) : Աւ նոյն ժողո-
վոյն վճիռը հաստատեց սուրբն Սահակ
պարթեւ յամի տեառն 435, Աշտիշաս
քաղաքը աղգային ժողովով : Աւստի
սուրբ Սարխամ կուսին Աստուածածին
չըսողը՝ արդեօք ինչ մաքով չըսեր, կամ
չըսելու իրաւունք մը ունի մի ըսելով
նորէն իրօնական ասիան յօրինելու և հար-
ցախորձ ընելու կարօտութիւն չիկայ.
մէկ մարդ մը սուրբ կուսին Սարխա-
մայ Աստուածածին անունը տալ չու-
ղէ նէ նղովեալ է առաջ ալ՝ հիմա ալ՝
և մինչեւ աշխարհքիս վերջն ալ :

Ահեղեցւոյ սուրբ խորհուրդները
 և արարողութիւնները կ'անարդեն . Քր-
 թիստոսի սուրբ Խաչը և սրբոց պատ-
 կերները հեթանոսացիութեան կար-
 գը դնելով եհեղեցին կուսապաշտութե-
 մէջ ինկած է կ'ըսեն . և ասոր համար
 Պողիկեան ըսված ազանդաւորներուն
 պէս են . որ Աբրահամ Վ . Հայոց կաթու-
 ղիկոսին ատենը՝ Քրիստոսի 655 թու-
 ին՝ Հայաստան երեւան ելլալով , կա-
 թուղիկոսը իրեն պարտականութեանը
 համեմատ շատ խրատներ տուաւ ա-
 նոնց . և երբ որ անուղղելի մնացին , քա-
 ղաքական իշխաններուն խնայուց , որ
 Հայաստանէն հալածեցին : Վաթուռն
 տարի մը ետքը՝ Քրիստոսի 717 թուին
 վերստին Հայաստան երեւեցան . և
 Յովհանն Վ . իմաստասէր հայրապետը՝
 որ Օճնեցի անունով կը ճանչցրի ,
 Դուին քաղաքը ժողովք ընելով Քնի
 719 թուին քրննեց անոնց վարդապե-
 տուիր և նշովեց . և նոյն ժողովքին ե-
 րեսուներկուերորդ կանանին մէջ պատ-
 ու իրեց ինչ որ հիմա սրբազան Պատրի-
 արքն ալ ժողովուրդին կը պատու իրէ :
 Դունոյ ժողովքին խօսքն է այս .
 « Ո՛չ է սարա ՚ի չարազանդ մըճղնէ իցն

Գտնուիս որ կոչին Պոլիկեանք, օթել
 ումք, (ըսել է տուներնին նրա
 տիլ) և կամ յարել և խօսակից լի-
 նել, և երթել եկութիւնս առնել.
 այլ ամենեւին հեռանալ ՚ի նոցանէ,
 դարչել և ասել զնոսա, զի որդիք սա-
 տանայի են և լուցկիք յաւխտենական
 հրոյն, և օտարացեալ են ՚ի սիրոյ կա-
 մաց արարչին. եթէ որ իցէ՝ որ յա-
 բեցի ՚ի նոսա, և ՚ի սիրելու թիւն
 և ՚ի բարեկամութիւն եկեացէ, պարտ
 է զայնպիսիան խոշտանկել, և ծանր
 սպառուհաս ՚ի վերայ ածել, մինչեւ
 զգաստացին և առողջացին ՚ի հա-
 ւատս. ապա եթէ դարձեալ վերբու-
 տին ՚ի նմին գոցին, զայնպիսիան հը-
 բամայեմք ամենեւին հատանել և ար-
 տաքս ընկենուլ իբրեւ զժանտախտ
 յանգամոց եկեղեցւոյ Քրիստոսի.
 զի մի արմատ գառնութեան ՚ի վերե-
 բեւեալ նեղիցէ և նովաւ բազումք
 սղծիցին» (Աբր. Ժբ. 15.) : (Ամեն. Լբ.
 Տաբեմագրոսիանս. Յովն. Իմաստ. Ըղլ. 74) :
 Խոշտանկել և ծանր պատահաս ՚ի վերայ ածել
 ըսածք աշխարհական բռնութիւն չի
 նշանակեր. եկեղեցական սպառիժ ըսել
 է. որ է ապաշխարութեան դորձքեր.


ինչպէս որ հին կանոնները կ'իմացու-
նեն . և յայտնի է ասիկայ մէկ մը՝ որ
այս սրատիմներուն ամէնէն ծանր և
վերջին կը դնէ եկեղեցիէն բոլորովին
կտրել նետելը . և մէկ մըն ալ՝ որ եկե-
ղեցիէն դուրս գտնելու աղանդաւո-
րին համար սրատու հասի խօսք չկայ ,
միայն եկեղեցւոյ մէջ գտնելուով ա-
նոնցմէ ալ չի զատվողներուն համար է .
սրբազան Պատրիարքն ալ ասկէց աւելի
բան բրած և ընելիք չունի : Ատենէ
մը ետքը նորէն երեւեցան Հայաստա-
նի մէջ , որ մկրտութիւնը և սրատարա-
գը և մեռանք չէին ընդուներ . և սր
խաչը կ'անարդէին . Քրիստոսի 847 թը-
ւին՝ Յովհաննէս Ա) . Սկայեցի կաթու-
ղիկոսը ասոնց վրայ աղէկ քննութիւն
ընելէն ետքը նշովեց :

Հարիւր տարի ետքը՝ Անանիա կա-
թուղիկոսին օրը նորէն երեւեցան . և
ասոնց դէմ՝ Անանիա նարեկացին՝ և
Վրթանէս քերթողը զատ զատ ճա-
ռեր գրեցին , և սուրբ Վրիգոր նա-
րեկացին ալ իրեն աղօթագրքին մէջ
եկեղեցւոյ և սրբալոյս միւռանի և ժա-
մահարին ճառերը գրեց : Յիսուն վաթ-
սուն տարի մըն ալ ետքը Սարգիս կա-

Թուղիկոսին օրը միջադետաց կողմերը երեւեցան, և ասոնց դէմ Հարք գաւառը ժողովք եղաւ, Քնի 1051 թուին, և դատասպարտեցան: Այս մոլորութիւններու ամենուն ալ հեղինակը օտար աղդէ են. քանզի Վանիքեցւոց աղանդոյն փոփոխուիներն են, և Վանի՝ պարսից երկրէն էր: Ասոնց մոլորութեան մէկ մասը Յունաց մէջ ալ մտաւ, և քանի մը կայսերք ալ այս մոլորութեւս հետեւեցան, պատկերները կը կոտորուտէին խաչերը կամ կը կոտորուտէին կամ կը հալեցընէին: Արժնաւորները վանքերէն դուրս հանելով կը բռնադատուէին որ կամ զինուոր ըլլան կամ արուեստաւոր, սրբոց մասունքը կրակը կը նետուէին, և այլն: Ասոնց դէմ ալ կրօնական աստուծոյ եղաւ Նիկիոյ Ս. Ժողովքը, Քրիստոսի 787 թուին, քանի մը եպիսկոպոս ալ մեր աղդէն գտնելով, մոլորութիւննին քննեցին և դատասպարտեցին: Այսքան կրօնական աստուծոյ եղաւ քննութիւններէն և դատասպարտութիւններէն ետքը ասոնց ուղած դատաստանը ինչ է: Թէ որ կ'ըսեն որ մենք ոչ նետարական եմք, ոչ պողիկեան, ոչ թոնդրակեցի, և ոչ պատ

կերամարտ, ու ստի այդ նշովքները մեզի
չեն վերաբերիր. պատասխան կուտամ
թէ ասոնք նե ստորական կամ պողիկեան
կամ թոնդրակեցի ըսվելուն համար
չի դատապարտեցան, այլ ունեցած մու
լորու թիւններնուն համար. քանզի լոկ
անունը մարդը դատապարտելի չըներ :

Մըսեն որ՝ « տասնեւիններորդ դա
րուն մէջ կը դատապարտուիլիմք » : Այլ
մէք կ'ըսեմք թէ՛ դարուն տասնեւին
ներորդ կամ քսաներորդ ըլլալը դա
տապարտելի մուլորու թիւ ճշմարտութի
չըներ : Այն վարդապետութիւնն որ
հինգերորդ և ութերորդ և իններորդ
և այլն դարերուն մէջ դատապարտելի
էր նէ ամէն դարու մէջն ալ դատա
պարտելի է : Այլ իրենք քանիւրորդ
դարուն մէջն են որ բոլոր քրիստոնէից
եկեղեցիները կուսպաշտութեան մէջ
ինկան ըսելով կը դատապարտեն : Վա
նիւրորդ դարուն մէջն են որ եկեղեց
ւոյ հայրապետներուն վրայ տեսակ տե
սակ անհիմն զրպարտութիւնը հանելով
կը դատապարտեն : Արդեօք տասն և
իններորդ դարը ատոնց անանկ արու
նութիւն մը կուտայ մի որ ուզած մար
դերնին դատապարտեն, և իրենք ազատ



մնան հինգերորդ դարէն ՚ի վեր կրօնա-
կան ատեանով և վճիռով իրենց արը-
ված դատապարտութիւնն : Անք ասու-
ուած այլն ճշմարտութիւնը ժամանակի
կապել չեմք գիտեր . Քրիստոս չքաւ
թէ՛ մէկը եկեղեցիին չի լսէ նե՛՛ մինչեւ
տասն և իններորդ դարը հեթանոսի և
մաքսաւորի պէս սեպվի , անկէց ետքը
ուղղափառ քրիստոնէի կարգը անցնի :
Այլ առանց ժամանակի սրոշում տա-
լու՝ եղե՛յի խղի՛բիւն շէ՛ղհանոս և շմարտաւոր
ըսաւ (Ապր . ԺԲ . 17) : Գիտես թէ
սրբազան առաքեալն ալ այդպիսի ան-
միտ զրուցվածքները գուշակելով ըզ-
գուշացուցեր է հաւատացեալները , որ
կ'ըսէ . «Օ՛հաւուրս խտրէք և զամիսս
» և զժամանակս և զտարիս » (Գաղ . դ .
10) : Այլ ուրիշ տեղ մը կ'ըսէ նոյն սրբ-
բազան առաքեալը . «Յիսուս Քրիս-
» տոս երեկ և այսօր , նոյն և յաւի-
» տեանս : Յուսմունսս պէսպէսս և յօ-
» տարաձայնս մի դանդաշէք » (Աբր .
Ժգ . 8 . 9) : Թէ որ այդ բողոքոյ գիրը
գրողները այնպէս կարծեցին՝ որ հիմա
դասնե-ի ներորդ Դարոսն մէջն եմք , պէս
պէս և օտարաձայն ուսմունքներու մէջ
դանդաշելու ազատութիւն ունիմք ,

մեղի դատապարտութի չըլլար, խաբւ
ված են. պատճառն որ՝ «Յս Քս երեկ
» և այսօր, նոյն և յաւխտեանս ». ժա
մանակով փոխվելը չունի. և հոգե
ւոր իշխանութիւնն ալ՝ որ Քրիստոս
հաստատած է՝ Քրիստոսի պէս անփո
փոխելի է. բանդի այն եկեղեցին՝ որուն
մէջ Քրիստոս հաւատացելոց շինուէ
համար առաքեալ, մարգարէ, աւետա
բանիչ, հովիւ և վարդապետներ դրաւ
(Լ. Գ. 11), դժոխքին դրունքէն
անդամ չի պիտի յաղթըլի. թող թէ
տասնեւիններորդ դարէն. որ ինքնին
բան մը չէ, միայն ժամանակի չափ
մըն է :

Գատապարտընուն պատճառն
ալ իրենց խելքովը դտեր են. կ'ըսեն
թէ՝ «Կը դատապարտըլիմք ոչ մէկ յան
» ցանքով մը, այլ միայն տեսուն մերոց
» Յիսուսի Քրիստոսի ցրցուցած ան
» մոլար ճամբուն մէջ քալելուս հա
» մար » : Կը հարցընեմ ասոնց թէ Քր
րիստոս այդ անմոլար ճամբան ո՞ւր
տեղ ցրցուցեր է ատոնց. հաւատոց
մասին մէկ անմոլար ճամբոց մը կայ՝
Քրիստոսի ընդհանուր եկեղեցին, ու
րուն առաջնորդ արված է Հոգին սբ՝

որ ամենայն ճշմարտութեամբ պիտի
 առաջնորդէ . (Յ՛՛՛՛ . ԺԿ . 13) . ասոնք
 այս ամենայն ճշմարտութեամբ սուրբ
 Հոգիէն առաջնորդւած եկեղեցին
 ձգելէն ետքը՝ ամէն մարդ ինքիւր գլու-
 խուն սուրբ գիրքը կարգալով, և միտ-
 քը հասկընալու համար իր խելքը ի-
 րեն առաջնորդ բռնելով, իրեն խել-
 քին ցրցուցած ճամբան ինչպէս ան-
 մուտ կրնայ կոր ըսել, և ասով ինչպէս
 ինքրզինքը Հոգւով սրբով առաջնոր-
 դւած եկեղեցիին ճամբան երթալէն
 աւելի ստահով կը սեպէ : Տասն և ին-
 ներորդ դարը մտքի լուսաւորութեան
 դար է . ասոնք այս կողմէն տասն և ին-
 ներորդ դարու մարդիկ չէն նմանիր .
 որովհետեւ ասանկ յայտնի բաները չէն
 կրնար կոր սրտել, կը կարծեն որ՝ դա-
 բուն տասն և իններորդ ըլլալը՝ միայն
 իրենք անդատապարտ ընելու համար
 է . աստուածային և մարդկային գիտու-
 թեանց մէջ յառաջագէմ ըլլալու և
 ուղիղ տրամաբանելու համար չէ :

Ինչպէս չէն տեսներ՝ որ այդ ճամ-
 բով հարկ կ'ըլլայ իրենց ամէն մէկուն
 ըսել, թէ Քրիստոսի օրէն մինչեւ հի-
 մա բոլոր աշխարհք սրբան քրիստոնեայ

կան նէ ամէնն ալ մոլորութեան ճամբան ինկած են . միայն իրենք են գտեր այն անմոլոր ճամբան . և այն ալ ինչո՞վ . նոյն իսկ տեսաւն մերոյ վարդապետութիւնը , որ ամէն բրիտանացի գիտէն և կը կարդան . բայց շիտակ հասկընալը միայն ստոնց տրված է եղեր . այն ալ ամէնուէն մէկէն չէ . ամէն մէկուն զատ զատ . որովհետեւ մէկը մէկալին համաձայնելու պարտականութիւն չունին . անանկ որ՝ Քրիստոսի խօսքին մէջը՝ « Ար ոչ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ » և այլն (Յով. 4 . 5) ջուր բաւը մէկը իսկական ջուր կը կարծէ , մէկը շորհոս ըսել կը կարծէ . երկուքն ալ կ'ըսեն որ Քրիստոսի ցրցուցած անմոլոր ճամբու մէջ կը քալեն : Աւստի այդ խօսքով այդ մարդիկը իրար խաբելու ալ կարողութիւն չունին . միայն իրենք զիրենք կը խաբեն . եկեղեցւոյն առաջնորդող սուրբ Հոգիէն զուրկ ըլլաւ նուէն համար Քրիստոսի ցրցուցած անմոլոր ճամբան ալ չեն կրցած գտնելու :

Վըսեն որ , « Մենք աղէկ գիտեմք » որ մեր սիրելի ազգին մէջ թէ՛ յարգի ազդապետաց և թէ՛ հասարակութեան մէջ անհամար անձինք կան որ սաստիկ

ո կը ցաւ ին այս անիրաւ բռնութեանը
 ո վրայ . և կը դղու ին այս սոսկալի ան-
 ո դժութութեանը վրայ ո . ճշմարիտով և
 սխալով խառն դրուցվածք մըն է այս ,
 և պարզել պէտք է : Յիրաւ չէ թէ մի-
 այն անհամար անձինք աղբ ին մէջէն ,
 այլ աղբը բոլոր կը ցաւ ի ասոնց վրայ .
 և ասոր նշանն է՝ որ ասոնց եկեղեցի-
 էն դուրս բլլալնին հասարակութեան
 ծանուցում տրված օրը եկեղեցւոյ մէջ
 սեղանին վարագոյրը կը քաշվի , որ սը-
 գոյ և տրտմութեան նշան է . ինչպէս
 որ մեծ պահոց ապաշխարութեան օրե-
 ըն ալ նոյն վարագոյրը քաշված մնալը
 ասոր համար է :

Եւ այց ցաւ ին ին դուրսէն ասոնց վը-
 րայ եղած բռնութեանը և անդժութ-
 թեանը վրայ չէ . քանզի անանկ բան
 չիկայ՝ որ անոր համար ցաւ ի . եկեղե-
 ցին մայր դժած իր մոլորեալ որդւոցը
 վրայ կը տրտմի . կ'արտասուէ , ինչպէս
 որ Քրիստոս ալ Արուստաղէմ քաղաքին
 վրայ արտասուեց . և անոր ըսածին պէս
 ինքն ալ իրմէ զատվող որդւոցը կ'ըսէ .
 « Քանիցս անգամ կամեցայ ժողովել
 ո զմանկունս քո , զոր օրինակ ժողովէ
 ո հաւ զձագս իւր ընդ թեւովք , և սչ

« Կամեցարուք » (Մով . խդ . 37) : Լայց
 թեւերն ալ բացած՝ նոյն զաւկրները
 իր գիրկը կը հրաւիրէ . գացողները սի-
 բով կ'ընդունի . և չի գացողներուն վը-
 բայ սիրտը շատ ցաւելուն համար իր
 գիրկը մնացողները կը խրատէ որ մու-
 բեալներուն հետ չի աւեսնրվին . չըլլայ
 որ անոնք ալ մոլորին . և իրեն վերատին
 ցաւ և կսկիծ սրտածառեն :

Արսեն որ , « Լյս բաներուն հեղի-
 նակը մէկ քանի օտար հողմերէ շարժը
 վաճ խռովասէր անխիղճ մարդիկ են .
 որ սրբազան Պատրիարքին միտքը ի-
 բենց գրաւեր են այս բաներս ընել տա-
 լու . և բարեմիտ հասարակութիւր կը
 գրգռեն մեր վրայ աղմուկ յարուցա-
 նելու » . քիչ մը ետքը կը բացատրեն
 թէ այս օտար հողմեր ըսածնին ի՞նչ է :
 « Ար ծանուցանեմք ձեր արժանապառ-
 ուու թեր կ'ըսեն , որ այս փոթորիկը
 արեւելեան քաղցրասիւք հողմէն շըն-
 չուած չէ . Հայոց ազգը ինքիրմէն
 ստիարված չէ իր խաղաղասէր համ-
 բաւը վտանգի մէջ դնել այս բա-
 ներս ընելով , այլ արեւմտեան դառ-
 նաչունչ հողմէն կը շարժի կոր , որ
 ներկայ դարուս մէջ անդամ մըն

Դալ փչելով աղբը երկուքի սլառակ
 Դտեց Դ : Ասոր կը սլառասխանեմ , [Թէ
 գուշակու-թիւնը ծուռ է . [Թէ որ ա
 սոր անուէնը հով և փոթորիկ է դրեր
 նե՛ ատիկա իրեն մտածելու բանն է .
 բայց ասանկ հերետիկոսները՝ որ եկե-
 ղեցին չէ [Թէ երկուքի կամ երեքի կամ
 քառասունի կամ հազարի բաժանելու ,
 այլ բոլորովին ցրուելու կը նային , ա
 մէն մէկ մարդ ինքիր գլխուն զատ հա
 լատք հնարելու ճամբու մէջ ձգելով ,
 իրաւամբք բանադրված են ամէն ա
 տեն Վրիստոսական ընդհանուր եկե
 ղեցիէն . հիմա ալ անոնց հետեւող
 ները ընդհանրապէս անընդունելի են
 բոլոր քրիստոնէից մէջ : Յոյնք չեն ըն
 դուէնիր և նզովքով կը մերժեն . Ռուսք
 չեն ընդունիր , և գիրքերնին Ռուսաց
 երկիրը չի ծախվիր . և դրսէն քարոյիչ
 չի կրնար մանել Ռուսաստան այս ա
 ղանդս քարողելու՝ բայց եթէ ծարտալ
 կերպարանօք ([Թէսլով) , և ղինքը չի
 գիտցընելով : Անդղիացիները անգամ
 այս նորաղանդներուն Տիսէնդրը ա
 նուն տալով՝ բուն անգղիական եկե
 ղեցւոյ անգամ եղողներուն շնորհված
 քաղաքական արտօնու-թիւններէն զըր

կած էին . միայն այս մէկ քանի տար-
վանս մէջ թոյլառուութիւն ըրին իրենց
կրօնքին պաշտօնը համարձակ կատարե-
լու : Աւրոպայի գրեթէ ամէն տէրուի ,
թէ հռոմէական և թէ բրոթէսթան ,
իրենց կրօնքէն դուրս կրօնք թէ քա-
րոզողներուն և թէ ընդունողներուն
արգելք դրած են . որ չեն կրնար հա-
մարձակ քարոզել և իրենց կրօնքին
մարդ դարձնել : Շատ տարի չըներ
որ Շվեյտու երկիրը Վիլսօն անուն
պատկերհան մը բրոթէսթանութիւնը
ձգել և հռոմէական ըլլալուն համար
Շվեյտու երկրէն աքսորեցին : Այն իսկ
մէթօտիսդները երբ որ Վաիդի կղզին
բաւական հեղինակութի ստացան նէ՝
հռոմէական քարոզիչները անկէց դուրս
ընել տուին թագաւորին , և օրէնք ալ
դրին որ այն տեղի քրիստոնեայները
ինչ գիրք պիտի կարդան նէ՝ առաջ այն
տեղի մէթօտիսդ քարոզիչին ցրցընեն
և անկէց հրաման առնեն . և այս պատ-
ուէրիս դէմ ընողին պատիժ կապեցին :
Ասոնք տասն և վեց կամ տասն և եօթ-
ներորդ դարու բաներ չեն . տարվան
մը կամ երկու տարվան բաներ են որ
Աւրոպայի լրագիրերը կը պատմեն : Աւ

այս տարի Ռուսիայի երկիրը՝ որ բրօթէսթան է, և Ասորիայի երկիրը՝ որ հռոմէական է, Ոսնկի քահանային և հեռեւողներուն նոր հնարած աղանդը քարոզելը արդիւլիւմ է: Արդեօք առնոց ամէնուն համար մէկէն կրնան միայդ բողոքը դրող ինքնահալածները բսել որ արեւմտեան կամ արեւելեան հովէ ելած փոթորիկներ են:

Վերը տրված համառօտ տեղեկութիւննօնիս հասկըցուցինք որ քանի առտեն որ պօղիկեանները և թոնդրակեցիները աղգիս մէջ գլուխ վերուցին՝ ամէն անգամին ալ ժողողքով բանադրուեցան: Հիմակվան եղածն ալ ուրիշ բան չէ. և ասոր համար արեւելքէն կամ արեւմուտքէն հով փչելու փոթորիկ հանելու կարօտութիւն ալ չի կայ. եկեղեցւոյ հովուաց պարտականութիւնն է, «Յառնէ հերձուած ողէ յեա միանդամ և երկիցս խրատելոյ» հրաժարիլ (Տիգրան . դ . 10): «Սը խիթարել սղջմտութեամբ վարդապետութեանն, և զհակառակորդսն կշտամբել» (Տիգրան . ւն . 9): Այս պարտականութիւն կատարելու համար բաւական է որ հողեւոր հովիւը իմաստ

տուն մարդ ըլլայ . և հաւատոյ պաշտ-
պան ըլլայ . ուրիշ տեղաց գրգռեցաւ
ասանկ բաներ ընելու ըսելը թէ՛ աղ-
գին համար՝ և թէ՛ աղգին հոգեւոր
հովուին համար , նախատինք է . ըսել
է որ՝ աղգը անտարբեր ամէն կրօնքի
տեղի կուտայ , և իրեն անդամ եղող
տկարամիտները թող կուտայ որ մոլո-
րեցուցիչներուն խօսքին խաբովելով
հաւատքէ մոլորին : Բսել է որ՝ հոգե-
ւոր հովուն ալ անհոգութիւն կ'ընէ .
Քրիստոսի տեսուն մերոյ իրեն հաւա-
տացած ժողովուրդը հովուելը չի գի-
տեր . և գայլը եկածին պէս ինքը կը
թողու կը փախչի . գայլն ալ անոնք կը
յափշտակէ ու կը ցրուէ (Յով. Ժ.
12) : Սեր սրբազան Պատրիարքին պէտք
է որ մեծապէս շնորհակալ ըլլամք բոլոր
Հայոց աղգը . և այս կը հաւածվի՝ իր ը-
սելով բողոք ընող մոլորեալ եղբայրնե-
րը անգամ . քանզի իրեն հայրական խը-
նամբը առ հասարակ ամէնուն վրայ կը
տարածէ . անոնք զիս չեն ուղեր նէ , ես
ալ անոնք չեմ ուղեր ըսելով բարձի
թողի ջրներ . իր եկեղեցական իշխա-
նութիւնը բանեցրնելով հաւատացել
ժողովուրդը կը խնայէ որ անխտիր ա-

նոնց հետ տեսութիւն ընելով անոնց
 մոլար վարդապետութենէն թունա-
 ւորվելու վտանգի մէջ չլինան . բայց
 անոնց համար ալ միշտ աղօթք կ'ընէ
 առ Մ^ծ , ամէնուն ալ աղօթել կը սխառ-
 ուիրէ , որ մոլորեաց հոգի զգաստուե-
 տայ , և իրեն ճշմարտուե՛ն ճամբան խօթէ
 անոնք : Մ^ծ կ'ըսէ մրգրէին բերանովը .
 « Ես փակեցից զճանապարհս նր սխառ-
 » նիչօք , և առականեցից զճանապարհս
 » նորա և զաւելոս իւր մի գտցէ . . .
 » և ասացէ , երթայց և դարձայց առ
 » այրն իմ առաջին . զի յայնժամ բարի
 » էր ինձ քան արդ » (Աղե՛է . ք . 6 . 7) :
 Արբազան հայրն ալ այս ճամբան կը
 բռնէ . մոլորեաց մոլորեցընելու ճամ-
 բան կը գոցէ անանկ բանով մը՝ որ ի-
 բնեց հոգեւոր գեղ ալ է . քանզի ու-
 զեն նէ՛ իրենց խղճին տագնապէն որով
 ասանկ բողոքներ ընելու կըստիպվին
 կոր , կ'իմանան որ , թէպէտ զիրենք ի-
 բօք հալածող չի կայ , բայց իրենց ա-
 նանկ կուգայ որ բոլոր աշխարհ իրենց
 դէմ ելեր է զիրենք հալածելու . ասով
 կ'իմանան անձային բանին և Վստական ե-
 կեղեցւոյն հոգւոց վրայ ունեցած զօ-
 բուիր , կըճանչնան որ՝ ինչո՞ղ դուռն ար-

քայուէ է եղեր եկեղեցին , որովհետեւ
 անկէց կտրուիլ դուրսնեամբիլ իրենցա-
 նանկ սաստիկ մորմոր և ցաւ կուտայ կոր
 որ իրենց վրայ բռնու[թի և անգ[թու[թի
 բանեցուցած ի սէս կուգայ կոր իրենց :
 Վայց աս ալ սէտք է գիտնան որ հա-
 լատալեաց վրայօք եկեղեցւոյ վճիւր
 անփոխելի և անդառնալի է . այն ա-
 ղանդն որ մէկ անգամ մը եկեղեցիէն
 մերժուլեցաւ , և հետեւողները բա-
 նադրուեցան՝ ամէն ատեն նոյն աղանդը
 մերժուլած է . և անոր հետեւողները
 բանադրուլած են . [թէ և ամէն ատեն
 բանադրանքը չի կրկնուի : Վանադրան-
 քին վրայէն ժամանակ անցնելով բա-
 նադրանքը քակուած չըլլար . քանզի մու-
 լորու ի մը հնարուելէն ետքը ժամանակ
 անցնելով այն մուլորու իր ճշմարտու[թի
 չըլլար : Աստի [թէ և սրբազան Պատ-
 ըխարքը նորազանդները հիմա չի բա-
 նադրեր , վերայիշել ժողովքներուն վըճ-
 ուովը եղած դատաստարտու[թինին տա-
 կաւին կը տեւէր : Այլ հիմա ասանկ ա-
 ղանդաւոր մը իր աղանդէն ետ չի դար-
 ձած և եկեղեցւոյ դիրկը չի մտած սրբ-
 բազան Պատրիարքը կամ ո՞վ և իցէ հո-
 գեւոր իշխանու[թիւն ունեցող մարդ

մը անխկայ եկեղեցւոյ հաղորդութեան
 ընդունի նէ, այն աղանդաւորը անով
 բանադրանքէն արձակած և եկեղեց-
 ւոյ որդի չի կրնար ըլլալ. անոր համար
 այն արձակումը ոչինչ է: Ասոնք իմա-
 նալով երանի թէ հաճին վերստին սր
 եկեղեցւոյ գիրկը դառնալու, որով
 սրտերնին մէկ քաղցր և երանելի խա-
 ղաղութի մը տիրէ. իրենց խղճին տազնա-
 սը հանդարտի. ամէնքս մէկ սիրով և
 մէկ հոգիով իրարու եղբայր ըլլամք
 ՚ի Քս Յս: Ամէնուս ալ խղճը և փա-
 փաքը այս է. ամէնքս ալ սրտի մտօք ա-
 ղօթող եմք առ Աճ այս բանիս համար:
 Ար յուսամք որ այս աղօթիցս սրտուզը
 վայելելով՝ բողոք ընողներուն կասկած
 բրած երկսպառակութէն ազատ կը մը-
 նամք: Ա՛աղաչեմք՝ որ սիրոյ և խաղաղու-
 թեան Հոգին՝ որ ամ ճշմարտութեամբ
 սուրբ եկեղեցւոյն կ'առաջնորդէ, ա-
 սոնց միտքն ալ լուսաւորէ, որ իրենց
 խելքին և հասկըցողութե տկարութիւն
 ճանչնալով իրենց վստահութիւնը սր
 եկեղեցւոյն առաջնորդութեանը վրայ
 հիմնեն. և այնպէս զինուորեալ եկեղե-
 ցւոյ հետ միով հաւատով նահատակե-
 լով անդրանկայ եկեղեցին ալ մտնելու
 ամէնքս մէկէն արժանի ըլլամք Ամէն:





